ԺԷ·

ՅԱԿՈՎԲ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍ· — ՌՃԻ = 1671, ՍԵՊՏ· 1·

(Հաստատելով թէ ոչ դարձցի Նիկողայոս ի Հռովմայ՝ զԹէոդորոս վարդապետն ընտրեալ արքեպիսկոպոս Լեհահայոց)[1]։

ԵՍՈՒՍԻ Քրիստոսի Ծառայ Յակոբ Կաթողիկոս կաթողիկէ եկեղեցւոյ ամենայն Հայաստանեայց· Վեհ և վերադիտող ամենայն հայկազեան սեռի և պատրիարգ առաքելական աթոռոյ ի Վաղարշապատ քաղաքի, ի տեղւոջ Իջման Բանին Աստուծոյ, գլխափոխան և յաջորդ Սրբազնակատար և գերերջանիկ Տեառն մերոյ և հօրն հասարակաց Գրիգորի Լուսաւորչին ի վերայ ընթհանուր հայկականաց տոհմից և Թորգոմեանց սեռից, և ամենայն առ հասարակ հաւատացելոց, որք 'ի քաղաք և ի գեօղս յաւանս և 'ի ծերպս վիմաց իցեն բնակեալ։

Գերափայլ իմանալի ճառագայթիւք և լուսով իմաստից արփիաւորեալ և դրոշմեալ ճշմարտաքարոզ վարդապետաց արհի և պանծալի եպիսկոպոսաց վառելոց լուսով աստուածազիտութեան և ի հովուապետութիւն բանաւոր հօտին հրաւիրելոց, երկնահրաւէր և աստուածանուէր քահանայից ի սրբազնագործութիւն կոչեցելոց, և համօրէն եկեղեցականաց և պաշտօնէից· ամենայն աշխարհականաց՝ ըստ պատուոյն արհեստին և որպիսութեանն կեցելոց, մեծաց և փոքունց։

Յամենեան Օգոստոսի յաւուր երեքտասաներորդի ի Թուականութեան մարդացելոյն Աստուծոյ ՌՈՀԱ և Հայոց ՌՃԻ· յամի հայրապետութեանս մերոյ ԺԶի։

Լուեալ զեկեղեցի Հայոց ի Լեհաց երկրին և զբանաւոր հօտն մեր որբացեալ և զրկեալ յառաջնորդէն և հովուէն իւրեանց, վասն գնալոյն Նիկողայոս-

1· Կաթողիկոսն յիշելով զսա և զՍտեփանոս՝ ծանօթ գիտնական Թարգմանիչն, չըսեր, բայց ժամանակակիցք վկայեն՝ որ հարազատ եղբարք էին· Պր· Կար· Եղանեանցի հրատարակած Բոնի միութիւն անուն գրոց մէջ՝ կան տեղեկութիւնք Թէոդորոսի վրայօք· Թէ և կասկածոտ մտօք գրուած, և նոյն մտօք անընդունելի եղած է նա ի յաջորդութիւն Նիկոլի· գնացեր է ի Հռովմ, յետոյ ի Սպանիա (ինչո՞ւ համար), և վերջապէս † է ի Հռովմ, յամի 1700 (12 փեբր·), 60 տարուան, և թաղուած է ի Ս· Մարիամ Եգիպտացի եկեղեցւոյ Հայոց։